

Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արտդիանշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Դիլիջան համայնքի Մշակույթի պալատի շենքի հիմնանորոգում» աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 25.12.2022թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առավագն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ կյուրթերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ մնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ Նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և

պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **263700000** (երկու հարյուր վաթսուներեք միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից **43950000** (քառասուներեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուին իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում^{30.1}:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուին պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց:

մույճին 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, որոնք են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ը. Դիլիջան, Մյասիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402096029
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար

Գ. Սարգսյան



/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արտոդիանշին» ՍՊԸ
Ը. Արարատ, Գրիբոեդովի 24
ՀՎՀՀ 04112378
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150000527187135

Տնօրեն

Գ. Խաչատրյան



/ստորագրություն/
Կ.Տ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՅԱՇԻՎ*
«Դիլիջան համայնքի Մշակույթի պալատի շենքի հիմնանորոգում»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N/N	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Արժեքը հազ, դրամ	
				Միավորի	Ամբողջը
1	3	4	5	6	7
	<u>Քանդման աշխատանքներ</u>				4,792.353
1	Մարմարե սալիկներով հատակների քանդում /առանց վնասելու/	մ ²	267.20	0.400	106.880
4	Մանրատախտակից հատակների քանդում	մ ²	1170.40	0.400	468.160
5	Կերամիկական սալիկներով հատակների քանդում	մ ²	120.70	0.400	48.280
6	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում	մ ²	1291.10	0.400	516.440
6	Աստիճանավանդակի հատակների և հարթակների ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում	մ ²	64.00	0.400	25.600
7	Թեթև բետոն սալերով միջնորմների քանդում	մ ³	9.60	7.000	67.200
8	Գլազուրային սալիկների քանդում պատերում	մ ²	161.20	0.500	80.600
8	Ֆելզիտե սալիկների քանդում պատերում	մ ²	18.30	0.600	10.980
9	Ց/ավազային սվաղի քանդում	մ ²	179.50	0.250	44.875
10	Փայտե վահանների քանդում	մ ²	90.00	0.400	36.000
11	Փայտե դռան շրջանակների քանդում	մ ²	161.63	0.800	129.304
12	Փայտե պատուհանների քանդում	մ ²	126.29	0.800	101.032
13	Փայտե պատուհանների քանդում /պատուհանագոգերով/	մ ²	69.34	0.800	55.472
14	Ալյումինե վիտրաժների ապամոնտաժում	մ ²	359.17	1.000	359.170
15	Շեպերի, պատերի և առաստաղի գաջի սվաղի քանդում	մ ²	1381.00	0.250	345.250
16	Դահլիճի մանրատախտակի հատակների քանդում	մ ²	22.00	0.450	9.900
17	Մետաղական բազրիքների քանդում	մ	5.40	0.600	3.240
18	Դահլիճի փայտե վահանների քանդում	մ ²	482.00	0.400	192.800
19	Մարմարե շրիշակների քանդում	մ ²	6.70	0.600	4.020
20	Թուջե մարտկոցների քանդում	հատ	250.00	1.300	325.000

21	Հանդիսատեսի նստարանների ապամոնտաժում	հատ	530.00	0.300	159.000
22	Սնաստաղի հին ներկի մաքրում	մ ²	2042.00	0.250	510.500
23	Պատերի հին ներկի մաքրում	մ ²	3405.00	0.250	851.250
24	Շին.աղբի բարձում էքսկավատորով ինքնաթափ ավտոմեքենա	1000մ ³	0.1200	700.000	84.000
25	Շին.աղբի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 5կմ	տն	198.00	1.300	257.400
<u>Տանիքի վերանորոգման աշխատանքներ</u>					36,246.051
1	Մետաղական թիթեղով տանիքի ծածկույթի քանդում	մ ²	947.00	0.200	189.400
2	Տանիքի ց/թիթեղից ծածկույթի, գոգնոցի, պարապետի գլխնոցի և ջրահեռացման ուղիների քանդում	մ ²	796.00	0.200	159.200
3	Ձեղնալուսամուտների քանդում	հատ	4.00	5.000	20.000
4	Տանիքի փայտե էլեմենտների քանդում	մ ³	56.30	15.000	844.500
5	Տանիքի ջրատար խողովակների քանդում	մ	42.00	0.150	6.300
6	Շին.աղբի բարձում ձեռքով ինքնաթափ ավտոմեքենա	տն	3.00	5.000	15.000
7	Շին.աղբի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 5կմ	տն	3.00	1.300	3.900
8	Տանիքի փայտե էլեմենտների կառուցում, օգտագործելով նոր կողահատ փայտանյութ	մ ³	50.45	205.000	10342.250
9	Ճարմանդ Փ10 L=350մմ	տն	0.3348	410.000	137.268
10	Տանիքածածկույթի կառուցում կավարամածի հետ միասին գունավոր ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով KՊ-25-0,5մմ	մ ²	1416.00	6.300	8920.800
11	Ռետինե տափօղակով ցինկապատ պտուտակամեխ M5x80	հատ	7788.00	0.015	116.820
12	Փայտանյութ կավարամածի կառուցման համար	մ ³	8.40	190.000	1596.000
13	Ձնարգելիչ գունավոր ց/թիթեղից L=1000	հատ	106.00	3.700	392.200
14	Ռետինե տափօղակով ցինկապատ պտուտակամեխ M5x80	հատ	1060.00	0.015	15.900
15	Ջրհորդանի կառուցում գունավոր ց/թիթեղով 0.5մմ հաստ.	մ	230.00	8.200	1886.000
16	Կողահատ փայտանյութ ջրհորդանի կառուցման համար	մ ³	8.05	190.000	1529.500
17	Գունավոր ց/թիթեղից ջրհորդանի հենակներ	հատ	385.00	0.350	134.750
18	Գունավոր ց/թիթեղից կեռաբևեռ	հատ	210.00	0.200	42.000
19	Ձեղնալուսամուտների կառուցում	հատ	11.00	35.000	385.000
20	Ձեղնալուսամուտների փայտե շերտափեղկերի կառուցում	մ ³	0.211	35.000	7.385

21	Փայտանյութ ձեղնալուսամուտների շերտափեղկերի կառուցում համար	մ ³	0.211	190.000	40.090
22	Շինի	հատ	22.00	0.500	11.000
23	Փայտե էլեմենտների յուղաներկում 2անգամ	մ ²	18.00	2.000	36.000
24	Ձեղնալուսամուտների պատերի երեսապատում 0,5մմ հաստ.գունավոր ց/թիթեղով	մ ²	48.00	1.000	48.000
25	Ձեղնալուսամուտների պատերի երեսապատման համար գունավոր ց/թիթեղ 0,5մմ	մ ²	48.00	4.100	196.800
26	Պիպերի կառուցում 0,5մմ հաստ.գունավոր ց/թիթեղով	մ ²	38.00	1.000	38.000
27	Պիպերի կառուցման համար գունավոր ց/թիթեղ 0,5մմ	մ ²	38.00	4.200	159.600
28	Ցվիկի կառուցում 0,5մմ հաստ.գունավոր ց/թիթեղով	մ ²	109.00	1.000	109.000
29	Ցվիկի կառուցման համար գունավոր ց/թիթեղ 0,5մմ	մ ²	109.00	4.200	457.800
30	Գոգնոցի և պարապետի գլխնոցի կառուցում 0,5մմ հաստ.գունավոր ց/թիթեղով	մ ²	89.70	1.000	89.700
31	Գոգնոցի և պարապետի գլխնոցի կառուցման համար գունավոր ց/թիթեղ 0,5մմ	մ ²	89.70	4.200	376.740
32	Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով	մ ³	58.5	9.000	526.500
33	Կավարամածի մշակում հրակայուն լուծույթով	1մ ² մշակ մակ.	1416.00	0.200	283.200
34	Ջրատար խողովակների տեղադրում գունավոր ց/թիթեղից Փ150	մ	106.00	4.000	424.000
35	Ձագարների տեղադրում գունավոր ց/թիթեղից Փ150	հատ	14.00	5.000	70.000
36	Ծունկերի տեղադրում գունավոր ց/թիթեղից Փ150	հատ	14.00	2.600	36.400
37	Ջրատար խողովակների ամրացման պլաստմասե էլեմենտներ	հատ	96.00	0.200	19.200
38	Տանիքի անվտանգության մետաղական ճաղաշարի կառուցում	մ	127.00	2.300	292.100
39	Թերթապողպատ -30x7	մ	76.80	0.900	69.120
40	Թերթապողպատ -30x6	մ	127.00	0.800	101.600
41	Ամրան Փ16A500C	տն	0.4008	410.000	164.328
42	Հեղյուս Փ 8	տն	0.0085	1300.000	11.050
43	Տանիքի անվտանգության մետաղական ճաղաշարի յուղաներկում 2անգամ	մ ²	89.00	1.300	115.700
44	Ց/ավազային հարթցուցիչ շորտի կառուցում 20մմ	մ ²	1325.00	1.800	2385.000
45	Գոլորշամեկուսիչ շերտ իզոգամով	մ ²	1325.00	1.500	1987.500
46	Տանիքի ջերմոնեկուսացում խարամով 12 սմ հաստ,	մ ³	159.00	6.600	1049.400

47	Տանիքի փայտե աստիճանների կառուցում	մ ³	0.770	210.000	161.700
48	Փայտե ճակտոնների և դռնակի կառուցում	մ ²	11.20	1.400	15.680
49	Փայտանյութ ճակտոնների և դռնակի կառուցում համար	մ ³	0.340	190.000	64.600
50	Ծխնի	հատ	2.00	0.500	1.000
51	Ճակտոնների և դռնակի երեսապատում 0,5մմ հաստ. գունավոր ց/թիթեղով	մ ² *	11.20	1.000	11.200
52	Ճակտոնների և դռնակի երեսապատման համար գունավոր ց/թիթեղ 0,5մմ	մ ²	11.20	4.200	47.040
53	Փայտե ճակտոնների և աստիճանների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով	մ ³	1.11	9.000	9.990
54	Տանիքի մուտքի մետաղական դռան տեղադրում	մ ²	1.92	47.000	90.240
55	Տանիքի գոյություն ունեցող մետաղական աստիճանների յուղաներկում 2անգամ	մ ²	2.00	1.300	2.600
<u>Միջնորմների կառուցում</u>					3,119.428
1	Անցքերի շաղափում պատերում	հատ	77.00	0.300	23.100
2	Անցքերի շաղափում ծածկի սալերում	հատ	59.00	0.400	23.600
3	Խարսխածողերի տեղադրում Փ8A240 ամրանով	տն	0.0189	440.000	8.316
4	Պենզոբետ սալերից միջնորմների կառուցում 10սմ հաստ	մ ³	15.70	27.000	423.900
5	Միջնորմների հորիզոնական ամրանավորում Փ8A240	տն	0.0964	440.000	42.416
6	Միջնորմների ուղղահայաց ամրանավորում Փ8A240	տն	0.1138	440.000	50.072
7	Միածույլ ե/բ բարավորների կառուցում B 15	մ ³	0.30	78.000	23.400
8	Ամրան Փ12A500C	տն	0.0271	410.000	11.111
9	Ամրան Փ6A240	տն	0.0056	440.000	2.464
10	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., 1 տակ պլաստմասով միջնորմների կառուցում	մ ²	79.40	29.000	2302.600
11	Գոյություն ունեցող միջնորմների առաստաղին և պատին հավող կարաների բացում և մաքրում 2սմ լայնությամբ /181մ/	մ ²	3.62	6.000	21.720
12	Ընդարձակվող փրփուրի ներարկում բացված կարաներում	մ	181.00	0.150	27.150
13	Միջնորմների ձկուն կապի կառուցում առաստաղում և պատերում	տն	0.1392	76.000	10.579
14	Մետաղական ձկված անկյունակ L50x50x3	մ	60.00	1.150	69.000
15	Դյուբել մեխ	հատ	800.00	0.100	80.000
<u>Հարդարման աշխատանքներ</u>					27,260.705
1	Պատեր սվաղի վերանորոգում գաջով	մ ²	610.00	1.900	1159.000

2	Պատերի բարելավված սվաղում գաջով	մ ²	667.00	1.900	1267.300
3	Առաստաղի սվաղի վերանորոգում գաջով	մ ²	344.00	1.900	653.600
4	Առաստաղի բարելավված սվաղում գաջով	մ ²	255.00	1.900	484.500
5	Շեպերի բարելավված սվաղում գաջով	մ ²	209.00	4.500	940.500
6	Պատերի և շեպերի ներկում լատեքսով	մ ²	4233.00	1.700	7196.100
7	Առաստաղի ներկում լատեքսով	մ ²	2468.40	1.700	4196.280
8	Կախովի առաստաղի կառուցում ՊՎՔ նյութով	մ ²	120.70	7.600	917.320
9	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով	մ ²	1079.00	1.900	2050.100
10	Շեպերի սվաղում ց/ավազային շաղախով	մ ²	24.00	4.000	96.000
11	Պատերի և շեպերի երեսապատում հախճասալերով	մ ²	432.00	7.800	3369.600
12	Դահլիճի ձևավոր առաստաղի վերանորոգում նրբատախտակով 50մմ հաստ	մ ²	8.00	3.200	25.600
13	Պատերի և սյուների երեսապատվածքի տակի սվաղի քանդում	մ ²	82.50	0.250	20.625
14	Պատերի երեսապատվածքի վերականգնում ֆելզիտե սալիկներով 2սմ հաստությամբ	մ ²	37.00	18.000	666.000
15	Սյուների երեսապատվածքի վերականգնում ֆելզիտե սալիկներով 2սմ հաստությամբ	մ ²	45.90	18.000	826.200
16	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով ֆելզիտով երեսապատելու համար	մ ²	55.20	1.900	104.880
17	Սրահում պատերի երեսապատում ֆելզիտե սալիկներով 2սմ հաստությամբ	մ ²	55.20	18.000	993.600
18	Մանրատախտակից հատակի հղկում և լաքապատում	մ ²	419.00	1.400	586.600
19	Գործարանային արտադրության ալյումինե բազրիքի տեղադրում	մ	26.20	25.000	655.000
20	Ժանկի և հին յուղաներկի մաքրում խոզանակով	մ ²	11.00	1.000	11.000
21	Պարի սենյակում մետաղական բազրիքների յուղաներկում 2անգամ	մ ²	11.00	1.300	14.300
22	Տախտակամածի հավաքում և քանդում ներքին աշխատանքների համար	100 մ ²	8.555	120.000	1026.600
<i>Պարի սենյակի բեմի նորոգում</i>					277.320
1	Բեմի ճակատների երեսապատում ՄԴՖ-ի վահաններով	մ ²	9.40	1.300	12.220
2	ՄԴՖ-ից վահաններ	մ ²	9.40	5.500	51.700
3	Բեմի և աստիճանների երեսապատում հաճարից մանրատախտակով	մ ²	24.80	8.000	198.400

4	Բեմի անկյունային մասի երեսապատում այլումինե անկյունակներով	մ	15.00	1.000	15.000
Հատակներ					23,941.970
1	Հանված մարմարե սալիկների կողերի մշակում	մ ²	147.20	0.500	73.600
2	Ցեմ, ավազային հարթ շերտի կառուցում 3սմ հաստ	մ ²	1958.20	1.800	3524.760
3	Ջրամեկուսիչ շերտի կառուցում մեկ շերտ իզոգամով	մ ²	125.00	1.600	200.000
4	Ցեմ, ավազային հարթ շերտի կառուցում 2սմ հաստ	մ ²	125.00	1.800	225.000
5	Չսահող խեցասալե հատակի կառուցում սոսինձի վրա	մ ²	434.00	8.000	3472.000
6	Խեցսալիկներով շրիշակների կառուցում սոսինձի վրա h=10սմ	մ ²	31.00	9.300	288.300
7	Լամինատից հատակի կառուցում 7մմ հաստ. /շրիշակով, սպունգով/ լավորակ	մ ²	583.00	6.600	3847.800
8	Մարմարե սալիկներով հատակների կառուցում սոսինձի վրա, օգտագործելով հինը	մ ²	147.20	5.000	736.000
9	Մարմարե սալիկներով հատակների կառուցում սոսինձի վրա, օգտագործելով նորը 3սմ հաստ.	մ ²	120.00	28.000	3360.000
10	Պրեսգրանիտե հատակների կառուցում սոսինձի վրա	մ ²	540.00	8.000	4320.000
11	Պրեսգրանիտե սալիկներով շրիշակների կառուցում սոսինձի վրա h=10սմ	մ ²	20.50	9.200	188.600
12	Հաճարից մանրատախտակից հատակի կառուցում	մ ²	22.00	7.800	171.600
13	Փայտե լազերի տեղադրում	մ ²	134.40	1.600	215.040
14	Տոլ	մ ³	19.40	0.400	7.760
15	Փայտե հատակների կառուցում 40մմ հաստ. տախտակով	մ ²	134.40	8.600	1155.840
16	Հաճարից մանրատախտակից հատակի կառուցում	մ ²	134.40	7.000	940.800
17	Բեմի փայտե հատակների քանդում	մ ²	42.00	0.350	14.700
18	Բեմի փայտե հատակների նորոգում 50մմ հաստ. տախտակով	մ ²	42.00	10.000	420.000
19	Բեմի փայտե հատակների հղկում	մ ²	207.50	0.400	83.000
20	Բեմի փայտե հատակների յուղաներկում 2 անգամ	մ ²	207.50	1.300	269.750
21	Միջանցքներում աստիճանների երեսապատում պրեսգրանիտե սալիկներով	մ ²	4.30	13.000	55.900
22	Պրեսգրանիտե սալիկներով շրիշակների կառուցում սոսինձի վրա h=10սմ	մ ²	0.54	13.000	7.020

23	Նկուղում աստիճանների երեսապատում չահող խեցասալիկներով	մ ²	11.50	6.200	71.300
24	խեցասալիկներով շրիշակների կառուցում ստիճնծի վրա h=10սմ	մ ²	6.00	9.200	55.200
25	Մարմարե սալիկներով շրիշակների կառուցում ստիճնծի վրա h=10սմ օգտագործելով նորը 3սմ հաստ.	մ ²	* 6.80	35.000	238.000
<u>Բացվածքներ</u>					24,523.170
1	Փայտե ներքին խուլ դռների / ՄՂՖ/ տեղադրում, ներառյալ դռան շրջանակը /առանց արժեքի/	մ ²	97.32	2.400	233.568
2	Դռան շրջանակ / ՄՂՖ/	մ ²	97.32	27.000	2627.640
3	Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով դռների տեղադրում	մ ²	30.54	36.000	1099.440
4	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., 1 տակ պլաստմասով դռների տեղադրում /սանհանգույցներում/	մ ²	22.68	34.000	771.120
5	Մետաղապլաստե բլոկով կաղնեգույն 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի դռների տեղադրում	մ ²	21.66	45.000	974.700
6	Մետաղապլաստե բլոկով կաղնեգույն 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի վերնափեղկի տեղադրում	մ ²	2.83	28.000	79.240
7	Փայտե ներքին դռան տեղադրում, ներառյալ դռան շրջանակը /առանց արժեքի/	մ ²	18.72	2.100	39.312
8	Փայտե դռան շրջանակ	մ ²	18.72	47.000	879.840
9	Մետաղապլաստե բլոկով կաղնեգույն 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի դռների տեղադրում վիտրաժում	մ ²	17.22	44.000	757.680
10	Մետաղապլաստե բլոկով կաղնեգույն 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի վիտրաժների տեղադրում, չբացվող	մ ²	350.56	28.000	9815.680
11	Մետաղապլաստե բլոկով կաղնեգույն 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի վիտրաժների տեղադրում /բարդ փականով բացվող/	մ ²	5.76	41.000	236.160
12	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., 1 տակ ապակով վերնափեղկի տեղադրում /միջնորմների վրա/	մ ²	36.80	23.000	846.400

13	Մետաղապլաստե բլոկով կաղնեգույն 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում, չբացվող	մ ²	140.10	28.000	3922.800
14	Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում, բացվող	մ ²	8.88	35.000	310.800
15	Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում /բարդ փականով բացվող/	մ ²	42.15	41.000	1728.150
16	Պլաստմասե կաղնեգույն պատուհանագոգեր 30սմ լայնությամբ	մ	62.70	3.200	200.640
<i>Դուռ - պատուհան</i>					194.000
17	Մետաղապլաստե բլոկով կաղնեգույն 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում, չբացվող	մ ²	1.85	28.000	51.800
18	Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում, բացվող	մ ²	1.85	36.000	66.600
19	Մետաղապլաստե բլոկով կաղնեգույն 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի դռների տեղադրում	մ ²	1.68	45.000	75.600
<i>Ղահիճի թեքահարթակի կառուցում</i>					294.350
1	Մանրատախտակից աստիճանաձև հատակների քանդում	մ ²	16.00	0.500	8.000
2	Բետոնե աստիճանաձև հատակի և հատակի քանդում	մ ³	2.95	14.000	41.300
3	Բետոնե թեքահարթակի կառուցում B 7.5	մ ³	1.50	45.000	67.500
4	Ցեմ, ավազային հարթ շերտի կառուցում 3սմ հաստ	մ ²	16.00	1.800	28.800
5	Թեքահարթակի վրա հաճարի մանրատախտակից հատակի կառուցում	մ ²	16.00	7.600	121.600
6	Մանրատախտակից հատակի հղկում և լաքապատում	մ ²	16.00	1.200	19.200
7	Շին.աղբի բարձում էքսկավատորով ինքնաթափ ավտոմեքենա	1000մ ³	0.003	700.000	2.100
8	Շին.աղբի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 5կմ	տն	4.50	1.300	5.850
<i>Մետաղական աստիճանների կառուցում</i>					510.419
1	Մետաղական աստիճանների կառուցում	տն	0.48928	110.000	53.821
2	Տաշտաձև հեծան N 16	մ	4.00	7.800	31.200
3	Տաշտաձև հեծան N 14	մ	16.66	6.600	109.956
4	Մետաղական անկյունակ L40x40x4	մ	15.40	1.200	18.480

5	Անոսավոր թերթ հաստ. 5 մմ	տն	0.233	550.000	128.150
6	Պոպատե թերթ հաստ. 8 մմ	տն	0.0152	513.000	7.798
7	Ինքնակտրող հեղույս M16	տն	0.001	1300.000	1.300
8	Մետաղական անկյունակ L75x75x5	մ	0.60	2.800	1.680
9	Հեղույս, մանեկ M16	տն	0.0019	1300.000	2.470
10	Ե/բ հեծաններում անցքերի շաղափում L=150մմ	100 հատ	0.04	120.000	4.800
11	Մետաղական ներդիր էլեմենտներ տեղադրում	տն	0.0096	240.000	2.304
12	Պողպ.թիթեղ b=8	տն	0.0076	513.000	3.899
13	Ամրան Փ16A500C	տն	0.002	390.000	0.780
14	Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	մ ²	38.00	1.300	49.400
15	Մետաղական բազրիքների կառուցում	տն	0.1322	110.000	14.542
16	Մետաղական խողովակ Փ40x3	մ	20.50	1.400	28.700
17	Մետաղական խողովակ 20x20x2	մ	55.70	0.500	27.850
18	Շերտաողպատ -30x3	մ	22.00	0.400	8.800
19	Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	մ ²	12.60	1.150	14.490
<i>Պարապետի վերականգնման աշխատանքներ</i>					389.315
1	Անցքերի բացում քարե պատերում Փ14մմ L=150մմ	հատ	7.00	0.300	2.100
2	Անցքերի բացում քարե պատերում Փ20մմ L=150մմ	հատ	12.00	0.800	9.600
3	Պատերի խարսխակապում Փ12A500C L=350մմ	տն	0.0022	430.000	0.946
4	Սյուների խարսխակապում Փ18A500C L=350մմ	տն	0.0084	430.000	3.612
5	Միաձույլ ե/բ միջուկների կառուցում B 15	մ ³	0.54	81.000	43.740
6	Ամրան Փ18A500C	տն	0.036	390.000	14.040
7	Ամրան Փ6A240c-1	տն	0.0074	390.000	2.886
8	Պարապետի կառուցում կ/ձևի տուֆով քարով	մ ³	3.10	25.000	77.500
